

Հակոբյան Գ. - Արամ Իսաբեկյանը՝ գեղանկարչուհի մոր մասին. «Իր արվեստը մաքուր ու զուլալ էր, հնարովի ոչինչ չկար» - թերթ, «Առավոտ», Ե., 28.10.2016

Հոկտեմբերի 28-ին Հայաստանի ազգային պատկերասրահում բացվեց գեղանկարչուհի Արփենիկ Նալբանդյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական ցուցահանդեսը: Ցուցադրված էին արվեստագետի ստեղծագործական տարբեր փուլերի գործեր՝ Հայաստանի ազգային պատկերասրահի մշտական ցուցադրության և ֆոնդային 48 գեղանկար, ընտանիքի հավաքածուի 17 կտավ: Արփենիկ Նալբանդյանն աշխատել է տարբեր ժանրերում՝ դիմանկար, բնանկար, նատյուրմորտ, սակայն դիմանկարը նրա արվեստում մշտապես գերակշիռ տեղ է զբաղեցրել: Aravot.am-ի հետ զրույցում գեղանկարչուհու որդին, գեղանկարիչ Արամ Իսաբեկյանը նշեց. «Ի՞նչ զգացողություն պետք է ունենա որդին մոր ցուցահանդեսի ու հարյուրամյակի առիթով, մի մարդ, որը երիտասարդ տարիքում հեռացել է կյանքից, ու բոլորը փաստում են, թե ինչ տաղանդավոր էր, ու ցավոք, իր հրաշալի արվեստն ընդհատվեց այն ժամանակ, երբ ինքը ստեղծագործական վերելքի վրա էր: Շատ ուրախ եմ եւ շնորհակալություն եմ հայտնում մշակույթի նախարարությանն ու Հայաստանի ազգային պատկերասրահին: Ոմանց կարող է թվալ, թե այս ցուցահանդեսն իմ նախաձեռնությունն է, սակայն ես ընդամենը օգնել եմ: Ուրախ եմ, որ Արփենիկ Նալբանդյանին հիշել են եւ ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդես կազմակերպել, որովհետեւ ինքը շատ արժանի է, որ բոլորն իմանան իր մասին: Իր ուսանողները պաշտում էին իրեն եւ այսօր էլ մեծ ակնածանքով են հիշում: Իր արվեստը մաքուր ու զուլալ էր, հնարովի ոչինչ չկար, առանց այլեւայլությունների էր՝ եւ գույնով, եւ իմաստով»: Մեր հարցին՝ որպես մարդ ի՞նչ է ժառանգել մորից, պարոն Իսաբեկյանը պատասխանեց. «Բարությունը, որ շատ անգամ ինձ խանգարում է»: Գեղանկարիչ Հաղթանակ Շահումյանը Արփենիկ Նալբանդյանին բնորոշում է ոչ միայն որպես շքեղ նկարչուհի, այլեւ գեղեցիկ կին: «Ես ուսանող էի, երբ ինքը դասավանդում էր: Ցավոք, ինձ դաս չի տվել, բայց բոլորս ակնածանք ունեինք իր հանդեպ, նախ արտաքինով շատ գեղեցիկ կին էր, բացի այդ լսել էինք, որ լավ նկարչուհի է: Ցավալիորեն ինքը շուտ հեռացավ կյանքից, ինչը ամբողջ ուսանողության վիշտն էր դարձել: Իր նկարչությունը իր չքնաղ էության հետ շատ կապված էր: Մեծ վարպետ է, սովորել եւ աշխատել է մեծ վարպետների միջավայրում: Այն ժամանակ էլ լուրջ մրցակցություն կար, թեեւ նկարիչներն այդքան շատ չէին, բայց արվեստի կռիվ ու պատվախնդրություն կար: Արփենիկ Նալբանդյանը շատ շատերից առաջնակարգ նկարիչ է եւ այսօր էլ արդիական է՝ լինելով դասական մշակույթի կրող»: Արփենիկ Նալբանդյանի հոբելյանական ցուցահանդեսը կտեւի մինչև դեկտեմբերի 28-ը:

Գոհար ՀԱԿՈՒԲՅԱՆ

<https://www.aravot.am/2016/10/28/821280/>